Վահան Թեքեյան

Աղվորները

Աղվորն ա՜ն է հավիտյան, որ անցավ օր մը քովեդ
Եվ աչվընե՛րդ օծեց,— աստվածային այցելո՛ւ,—
Գեղեցկությամբ մը, որուն ա՛լ չդարձար նայելու,
Եվ չուզեցիր հանդիպել անոր անգամ մըն ալ գեթ . . .

Աղվորն ան է տակավին,— հավիտյանե հավիտյան,—
Որ նայվածքիդ արևին տակ կմեծնար համրորեն,
Որ գերթ ծաղիկ մ՚օրորվող գարնան անուշ հովերեն,
Երբ մեկնեցար՝ մտքիս մեջ մնաց միշտ թարմ, մի՜շտ
բուրյան . . .

Եվ աղվո՛ր,— դուն գիտե՜ս օրինյալ անունը անոր,—
Անիկա՛ է, որ կարծես պիտի կրնար քեզ սիրել,
Որ սերդ անշուշտ գուշակեց ու սպակեց ակընկոր,
Որուն սակայն լավ է, որ չուզեցիր սիրտը խռովել . . .
Աղվորն անոնք են միայն, որ տենչանքիդ ընդմիջեն
Անցան, գացի՜ն ու հիմա քեզ հեռուեն կկանչեն . . . :